

x

Ունէ աշխատաւոր, երբ իրեն յանձնը-  
ւած գործ մը լաւագոյն ձեռով կը կատարէ  
առաւելագոյն շահ մը կ'ապահովէ ինքզին-  
քին, Այս շահը բոլորովին տարբեր է այն  
դրամէն զոր գործի մը առիթով իրրե վար-  
ձատրութիւն ձեռքէ ձեռք կը փոխանցուի:  
Այս շահը ի գործ զրուած ճիգին գումարն  
է և այն ներքին գոհունակութիւնը զոր  
մարդ անխուսափելիօրէն կ'ունենայ երբ  
գործ մը յաջողութեամբ կ'աւարտէ: Ան-  
կապած մեր զխտութիւնը անցեալի մեր  
ունեցած փորձառութիւններուն գումարն է:  
ուստի փորձառական շահ մըն ալ կայ իւ-  
րաքանչիւր գործի աւարտին: Այս շահը  
անաւասիկ մեր էութեան մէկ մասն է:  
Չենք մտնար և որեէ տտեն կրնանք ու-  
նենալ զայն:

Ունէ աշխատաւոր երբ այս մտածումը  
արմատացած կերպով ունենայ իր մտքին  
մէջ, հարիւր առ հարիւր առիթը ունի յա-  
ռաջգիմելու:

x

Դժբախտաբար շատեր կը կարծեն թէ  
զիրաւ ցնցուիլն ու վարմանք ցոյց տալը  
սրբութեան նշան մըն է, մինչդեռ սուրբերն  
իսկ կարգ մը մարդկային երեսփոխներու առջև  
պիտի չցնցուէին այնպէս ինչպէս ցուցա-  
մօյները յաճախ կ'ընեն: Բնականաբար սուր-  
բերը պիտի ցուէին, վշտանային, տառա-  
պէին, բայց երբեք ցուցատուական արարք-  
ներու մէջ պիտի չըլլային: Զարմացական  
ալիանդակ ձեեր առնել, զգացնել որ ուժ-  
ղին ցունց մը կը կրես, սնափառութիւն է

և ի վերջոյ փափաք մը և միջոց մը՝ ցոյց  
տալու համար այլոց թէ որքան բարձր ըն-  
կերային դիրք մը ունիս և ի՛նչ ... զգա-  
յուն խիղճ մը:

x

Առարկութիւններէն մէկը թէ ինչո՞ւ  
կինը պէտք է գաղատագրուիս և մտնէ  
առեարական ասպարէզ կամ այլ ազատ  
ասպարէզներու մէջ սա է թէ կինը գերի  
մըն է: Գլխաւոր առարկութիւնը այն է թէ  
այլ մարդը իր ասօրեայ կեանքին մէջ ունի  
զեզեցիկ արկածախնդրութիւններ, մրցակ-  
ցութիւն ուստի և շահ:

Սովորական մարդ մը անսահմանօրէն  
աւելի գերի է քան իր կինը որ խաղաղու-  
թեամբ նստած իր տունը կը կարծէ թէ  
ձանձրախտէ կը տառապի: Մարդը զաժան  
օրէնքներու կը հպատակի, շատ անգամ  
այնպիսի մարդոց պէտք է ծառայէ և գո-  
հացնէ որոնց հանդէպ ոչ յարգանք ունի ոչ  
ալ համակրանք: Ծատ մը պարագաներու  
չկրնար նոյնիսկ ինքնատիպ ըլլալ: Իր ամ-  
բողջ կարողութիւնները պիտի տրամադրէ  
կազմակերպութեան:

Միւս կողմէ սակայն իր կնոջ իրաւա-  
սութիւնները անհամեմատօրէն աւելի են:  
Անիկա ձեռով մը արուհին է առեարական-  
ներուն, տան կարգադրութիւններուն մէջ  
բացարձակ հեղինակութիւն ունի, կրնայ իր  
երեակայութիւնն ու ճարտարութիւնը բտա  
կամս գործածել, և ի վերջոյ իր տան իշ-  
խանուհին է: Եթէ այս պարագան գերու-  
թիւն է, մարդիկ ալ պիտի ուզեն քիչ մը  
ունենալ ատկէ:

**Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ**

**ՆԿԵՂՆԵՍԱՆՆԵՐ - ԲՄՄԱՆՆԵՐ**

- Ուր. 1 Յուլիս. — Վարդուան նախատեսա-  
կէն ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր  
եպ. Պողոսեան:
- Եր. 2 Յուլիս. — Տօն Ս. Լորն մերջ Դիզորի  
Լասուրջին (Կիւս Եղիսրաց): Ս. Պատարագը մա-  
տուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատ-

րան մէջ: Ժամայրան էր Լոգ. Տ. Յակոբ Վրդ.  
Վարդանեան:

- Կիր. 3 Յուլիս. — Ս. Պատարագը մա-  
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատ-  
րան մէջ: Ժամայրան էր Լոգ. Տ. Վարուժան  
Վրդ. Գապարահեան:
- Դչ. 6 Յուլիս. — Վարդուան նախատեսակը  
պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Լանդիսապետ էր  
Գեր. Տ. Սուրեն Եպ. Քէմհանեան:
- Եչ. 7 Յուլիս. — Ս. Թարգմանչացն Սահակայ  
Մեծոպայ (Տօն ազգային): Լանդիսաւոր Ս. Պա-  
տարագը՝ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ  
մատուց և քարոզեց Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Չին-  
չինեան. բնարան ունենալով ՎՄԲ զարդարեցին  
չինեան. բնարան ունենալով ՎՄԲ զարդարեցին  
անօրինաբար զիմաստս անեղին ...:
- Եր. 9 Յուլիս. — Վարդուան նախատեսա-

կին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպո. Պողարեան:

● Կիր. 10 Յուլիս. — Գիւս Տիոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը՝ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարի Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց չող. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան շանդիսաւոր երթ ու դարձին նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպո. Պողարեան:

● Աւր. 15 Յուլիս. — Վաղուան նախատանակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպո. Պողարեան:

● Եր. 16 Յուլիս. — Երկաստան առաւելոցն Բրիտանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատան մէջ: Ժամաբարն էր Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Պայրամեան:

● Կիր. 17 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատան մէջ: Ժամաբարն էր Չոգ. Տ. Վազգէն Արդ. Գրգորեան: Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն, նորոգ անդուցեալ Գեր. Տ. Սուրէն Արքեպո. Մանասեանի հոգոյն ի հանդիստ, անոր մահուան ակթօրէքին առթիւ:

● Աւր. 22 Յուլիս. — Վաղուան նախատանակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. էջմիամբն մատան մէջ: շանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան:

● Եր. 23 Յուլիս. — Յիւստակ Տապանակին: Ս. Պատարագը ի Ս. էջմիամբն մատոյց չող. Տ. Վազգէն Արեղայ Գրգորեան:

— Վարդավաթի հանդիսաւոր նախատանակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան:

— Երեկոգեմբն, Մայր Տաճարին մէջ. Գեր. Տ. Նորայր Եպո. Պողարեան նախագահեց ղեկեցեցէնի և շահման արարողութիւններուն:

● Կիր. 24 Յուլիս. — ՎԱՐԿԱՎԱՍԻ (Տօն Այլախեղաւթեան Տեառն): Մայր Տաճարին մէջ, մեծ հանդիսաւորութեամբ Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Գեր. Տ. Նորայր Եպո. Պողարեան, անդրադառնալով նորոգ վախճանեալ Ս. Աթոռոյս բարերար վսեմ. Բայրուստ Պէյ Կիւրղէնկեանի կեանքին ու գործերու մասին: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան նախագահեց նորին վսեմութեան հոգոյն ի հանդիստ կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Բշ. 25 Յուլիս. — Յիւստակ մեռելոց: Ս. Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց չող. Տ. Նաշիասեր Վրդ. Արուստեան Ապո, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նախ Մայր Տաճարին մէջ, ապա գաւիթը՝ Երանշնորհ Տ. Կիւրղայ Ս. Պատար. Չօր շիրմին վրայ, ինչպէս նաև Մամթաղի գերեզմանավայրին մէջ:

● Աւր. 29 Յուլիս. — Վաղուան նախատանակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան:

● Եր. 30 Յուլիս. — Տօն Ս. Թադէոսի առաք.

և Ասնիկոյ կուսին: Ս. Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց չող. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան:

● Կիր. 31 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Ղրեշտակապետ: Պատարագին էր Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Պայրամեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի նախագահութեամբ, կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, Ս. Աթոռոյս Միաբան Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի մահուան տարելիցին առթիւ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ա Ա Ն Բ

● Բշ. 4 Յուլիս. — Երեկոյեան, Միացեալ Նահանգաց անկախութեան 178րդ տարեդարձին առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Աւր. 8 Յուլիս. — Առաւօտուն, Չոգ. Տ. Չաւէն Վրդ. Չինչլինեան մեկնեցաւ Սիւրիս-Լիբանան, յառաջիկայ զյորոցական տարեշրջանին Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանին համար նոր սաներ արձանագրելու:

● Դշ. 13 Յուլիս. — Երեկոյեան, Ֆրանսայի Ազգային Տօնին առթիւ, Ֆրանսական Հիւպատոսարանին կողմէ, Տi. Annot քրահներուն մէջ տարբուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Բշ. 18 Յուլիս. — Երեկոյեան, Ազգային Ազգային Տօնին առթիւ, Ապառիական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եշ. 21 Յուլիս. — Երեկոյեան, Պիւնիքայի Ազգային Տօնին առթիւ, Պիւնիքական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եր. 23 Յուլիս. — Երեկոյեան, Եթովպոյ Նաշի Աէլասիէ Ա. Կայսեր ծննդեան 63րդ տարեդարձին առթիւ, Եթովպական Հիւպատոսարանին կողմէ, Claridge Hotel-ի մէջ տարբուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եր. 30 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Խումայ Գուրպան Պայրամի տօնին առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիասեր Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան այցելութիւն տուին քաղաքիս վսեմ. Կառավարիչին, Բաղաքապետին, Ընդհանուր Ոստիկանապետին, Միւլթիլին և Սէստական Արարիչ Հիւպատոսին:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
ԺԱՌԱՆԳ. ՎԱՐՓԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

նշ. 7 Յուլիս Ս. Թարգմանչաց տանի իրիկ-  
ուան ժամը 7ին, Ժառ. Վարժարանի հանդիսա-  
սրահին մէջ տեղի ունեցաւ Վարժարանի Ամա-  
լիւրի Մրցանակարաշխութեան Հանդէսը. նա-  
խագահութեամբ Պատր. Տեղապահի Փոխ. Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմհանեանի և ի ներկայու-  
թեան հրաւիրեալներու:

Ըստ սովորութեան, այս տարի ևս Հանդէսը  
կը բաղկանար երկու մասերէ:

Հանդէսը սկսաւ ձմռան դարձուցիկէն թարգ-  
մանչաց շարականով, յորմենեակ Տեսուչ Լոգ. Տ.  
Հայկազուն Վրդ. Արքայանքան ըրաւ հակիրճ  
բացման խօսքը: Ասոր յաջորդեցին բանաստեղ-  
ծութիւնները զոյգ Սարկիսազներուն, երկուքն ալ  
պատրաստուած գովելի քննախորութեամբ: Բար.  
Գրիգոր Սրկ. Սահակեան խօսեցաւ շէտայն հին  
կրօնքը և հեթանոսական վերադարձիներ քրիս-  
տոնեայ հայոց մէջն նկատելի շուրջ, իսկ Բար.  
Արմենակ Սրկ. Շիրվանեան Վերադարձի վարդա-  
պետարանը, զայն ներկայացնելով իր կեդրոն  
մշակոյթի, որուն ամենէն յատկանշական երեսն  
է սակայն Գրիգոր Շղթալակի ու Յովհ. Վոյտի  
նման մեծագործ անմնաւորութիւններու մտաւոր  
տուած ըլլալը, ու ձանրացաւ մասնաւորաբար  
այս զոյգին գործունէութեան մասին: Կարգաց-  
ուեցան նաև շարադրութիւններ, եղան մեներգ-  
ներ ու խմբերգներ. ինչպէս նաև արտաստեղ-  
ծութիւններ՝ Հայերէն (Աշխարհաբար և Դրարար).  
Անգլերէն, Արաբերէն և Ֆրանսերէն լեզուներով:

Հանդէսի Բ. Մասը սկսաւ ճամբարայ Մոյս-  
սիսի շարականով, զոր երգեցին Ժառ. Սաներ:  
Ազա Լոգ. Տեսուչ Լայրուրը կարգաց Վարժա-  
րանի միամեայ կեանքի ու գործունէութեան  
տեղեկագիրը. ուր մանրամասնօրէն նկարագրը-  
ուած էր Վարժարանի ներքին կեանքը. իր զա-  
նազան երեսներով, որով ետք յաջողագոյն աշա-  
կերտներն ու մարդիկներ վարձարանեացան զիր-  
քերով ու մետալներով: Լուսկ ապա խօսք առաւ  
Գեր. Նախագահ Սրբազանը. որ յանուն Ս. Յա-  
կոբեանց Միարանութեան և ներկայներուն շնոր-  
հանքով ջանքերուն շնորհ Վարժարանը վե-  
րականցնած է և հասած այսօրուան զեղեցիկ  
արդիւնքին: Ըսաւ թէ ամէն հաստատութիւն  
ունեցած է իր վերելքներն ու վայրէջքները ու  
ապա հայրական յորդորներ ու զղեց աշակերտնե-  
րուն, մաղթելով որ անոնք ըլլան սիրաբոյսի  
մէջ մէկ քաջարի պահակներ ազգային այս դա-  
բաւոր ու փառաւոր Հաստատութեան: Կոչ ըրաւ  
ներկայներուն որ ոչինչ խնայել Վարժարանի բա-  
րեքին համար, որպէսզի ան վերագտնէ երբեմնի  
իր փայլուն ու նախանձիլի զիրքը: Հանդէսը  
փակուեցաւ Տէրուանկան Աղօթքի միարեբան  
երգեցողութեամբ:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՓԱՐԱՆԻ

17 Յուլիս, Կիրակի կէտրէ վերջ ժամը 5ին,  
Ժառնգ. Վարժարանի բակի հինաւուրց մայրիկն  
ներքև հաստատուած շարժական բեմին վրայ  
տեղի ունեցաւ Ս. Թ. Վարժարանի Ամալիւրի  
Հանդէսը, նախագահութեամբ Պատր. Տեղապահի  
Փոխարտորդ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի:

Ա. Ե. Քան կրկու ժամեր տեղի հանդէսի  
ընթացքին յաջող կերպով տեղի ունեցան արտա-  
ստեղծութիւններ. միւրքիկ արամախօսութիւններ,  
մարզանքներ, հայկական պարեր, և այլն: Վար-  
ժարանի ընթացաւարտ դասարանէն և Մանկա-  
պարանկի աշակերտութիւնէն: Հանդէսի աւար-  
տին, Վարժարանի ամ. Տեսուչ Լոգ. Տ. Յակոբ  
Վրդ. Վարդանեան տուաւ հակիրճ տեղեկութիւն-  
ներ զպրօքի տարուան մը կեանքի մասին. որով  
ետք նախակրթարանի 23 և Մանկապարտէզի 57  
երկուսն ընթացաւարտները ստացան իրենց մկա-  
յականները. իսկ ուսման իւրաքանչիւր հիւղի  
մէջ յաջողագոյն աշակերտները ստացան մրցա-  
նակներ: Հանդէսը վարձուեցաւ Գեր. Նախագահ  
Սրբազանէն շրջանաւարտներուն ուղղուած խրա-  
տականով ու Վարձարանի շնորհ:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
ԱՄՍԱՆԻ ԼԵԹՈՒՍԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐՓԱՐԱՆԻ

Կիրակի, 10 Յուլիս 1955 առաւօտեան ժամը  
9ին, Ամմանի Բնքրա Սինէ-Մայրիկ տեղի ու-  
նեցաւ Լեթուսեան Ազգ. Վարժարանի Ամալիւրի  
Հանդէսը. նախագահութեամբ Լոգ. Տ. Հայկա-  
զուն Վրդ. Արքայանքանի:

Հանդէսը սկսաւ Յորդանանեան քայլերով,  
որով ետք վարժարանիս Տեսուչ Լոգ. Տ. Կորին  
Վրդ. Մանուէլեան ըրաւ բացման խօսքը: Ապա  
խաղաղութեացաւ ճոխ յայտագիր մը, բաղկացած  
մեներգներէ, խմբերգներէ, արտաստեղծութիւննե-  
րէ, ուղեբաններէ, պարերգներէ: Նախակրթարանի  
թէ Թաղիկ դասարանի աշակերտութեան կողմէ,  
որոնք յայտարար նշաններն էին վարժարանի  
ուսուցչական կազմին տարուան մը խնամքօտ ու  
յարաստե աշխատանքին: Երկու մասերէ բաղկա-  
ցած այս հանդէսը տեղի աւելի քան երեք ժա-  
մեր: Հանդէսի ընթացքին, նախակրթարանի 17  
և Մանկապարտէզի 30 երկուսն շրջանաւարտները  
ստացան իրենց մկայականները, իսկ հանդէսի  
աւարտին՝ Լոգ. Նախագահ Լոր օրնութիւննե-  
րը, որ իր փակման խօսքով կը յորդորէր Ամա-  
նահայ գաղութը չհրժօրէն փարիլ իրենց Մայ-  
րենի Եկեղեցւոյն ու Գոլթոյնի, որոնք երկու  
մեծագոյն ազգակներն են իրբև ազգ մեր գոյու-  
թիւնը պահպանող: